

### Հ Ա Ն Ն Ո Ւ Մ

## Հ Ա Յ Վ Ա Կ Ա Ն Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

# ՉՈՐՍՀԱՐԻԻՐԱՄԵՍԱԿԻՆ ԱՌԹԻԻ

Յունիս տասնըվեց Կիրակի օրը Ամերիկայի Հայ գաղութին եւ մասնաւորապէս Հայ Ուսանողական Միութեան տարեգրութեան մէջ պատմական նշանակելի օր մը Հանդիսացաւ. առաջին՝ անոր Համար որ Աղլանդեանի այս ասպնջական ակիբրուն վրայ՝ Հայրենի Հողէն վիթխարի անջրպետով մ'ը բաժնուած՝ տարագիր Հայ գաղութը Հայ Հողիով ահադճուն ժամ մը ըմբռնեց տօնելով Հայ սպազբութեան չորսՀարիւրամեակին գեղեցիկ Հանդէսը: Երկրորդ՝ Հայ գաղութին ծոցէն նոր ծնած ու տակաւ կազմակերպուած ու բեղմնաւորած Ուսանողական Միութեանը իր երախայրիք պտուղը տուաւ մեծ զոհողութիւններով կազմակերպելով Հանդէս ու անոր կից ցուցահանդէսը:

Պէտք է յիշել սակայն որ այս գաղութին մէջ Հանդէսներ, Հրատարակային ժողովներ այնքան յաճախի սարքուած են ու կը սարքուին որ գրեթէ ալ Հասարակ տեղիք դարձած են չըսելու Համար տաղտակի: Սակայն այս Հանդէսը կը տարբերէր այս բոլորէն անով որ, ափսոսանքովս մը ըլլալէ աւելի խրատմանքի, անպատում Հիացումի աղաղակ մըն էր վերջցուած Հայ կուրծքերէն Հայ սպազբութեան չորսՀարիւրամեայ երկարատեւ ու խոստմնալից դործունէութեան առթիւ:

Հանդէսը տեղի ունեցաւ Պոսթոնի Փէյն Միմօրիլլ Շօլի մէջ Մայիս 26, Կիրակի ժամը երեքէն մինչեւ վեց:

Սրահին բեմը զբաւած էին կիսաբոլորական եւ Միութեանս դիւանի անդամները, Ամերիկահայ Մամուլի ներկայացուցիչները, օրուան ատենախօսները եւ Պոսթոնի Օամ. Հիւպատոս Ալբրամ Ֆախրի էֆէնտի:

Ուս. Միութեան Ատենապետ, Տիար Ռ. Ս. Բաղդուպեան, Գօլբլմիս Համալսարանէն ընթացաւարտ, քանի մը պղնձ խօսքերով ժողովը բացաւ, շնչելով օրուան Հանդէսին բացառիկ կարեւորութիւնը եւ յիշելով միանգամայն որ Հայ. Ուս. Միութիւնը զգալով զայս սարեց այս ժողովը եւ յարակից ցուցահան-

դէսը, որ անդրանիկն է այս տարուան մէջ կատարուելիք նոյն օրինակ տօնախմբութեանց:

«Ազգ» ի խմբագրապետ Տիար Արմենակ Ն. Նազարէթեան Հայ զբնագրութեան պատմութիւնը ըբաւ մէջ բերելով թէ «Գրչագրութիւնը Հայոց մէջ շատ կանուխն դոյութիւն ունէր, զոր կ'ապացուցանեն Հինէն մնացած կարգ մը բառեր, օրինակ, արձանագրել, գրոց են.: Սակայն դանազան պատճառներով զբնագրուած զբքերը կորսուած են եւ ամենէն Հինը ութերորդ դարէն անդին չանցնիր»:

Տիար Վահան Գիւրքեանի «Հայ Տպագրութեան Պատմութիւնը» ուսումնասիրութեան ամփոփումը կարդաց Ուս. Միութեան Փոխ-Ատենապետ Տիար Արսէն Չօրպաճեան Եէյլ Համալսարանէն:

«Ամերիկահայ Տպագրութեան» ծագումին ու զանազան դիմացեղուններուն վրայ Հետաքրքրաշարժ ուսումնասիրութիւն մը ներկայացուց Անդլիերէն «Արմէնիա» թերթի խմբագիր Տիար Արշակ Տ. Մահտէսեան:

Տիար Ա. Չամիչեան ներկայ Հանդիսականներուն ներկայացուց Օամանեան Հիւպատոսը, եւ բեմ Հրաւիրեց զայն խօսելու: Հիւպատոսը Հայ երիտասարդներու Ամերիկայի մէջ ցոյց տուած ուսումնատեսն ու յառաջադէմ ոգիին ու փայլուն յաջողութիւններու մասին դրուստալիք ճառ մը խօսեցաւ:

Մտամանշեց թէ Հայը ինչ յառաջդիմական ու շինարար դործունէութիւն մը ունեցած է Օամանեան Հողին վրայ, եւ ինչպէս լուսաւոր երկրի մը մէջ, որպիսին է Ամերիկան, կը դառնուին Հայ երիտասարդներ որոնք իրենց Հազարաւոր մը ցակիցները գլել անցնելով բարձր գիրքերու Հասած են եւ նոյն իսկ Ամերիկեան Համալսարաններուն մէջ դասախօսելու պատիւին արժանացած են:

Յետոյ կարգով ներկայացուցան Ամերիկահայ Մամուլի ներկայացուցիչները որոնք ավուր պատշաճի շատ կարճ ուղերձներ ըբին:

«Ազգ»ի կողմէն խօսեցաւ՝ Տիար Ա. Ն.

Նազարէթեան, «Ասպարէզ»ի կողմէն՝ Տիար Չօքիւրեան, «Հայրենիք»ի կողմէն՝ Տիար Ս. Վրացեան, «Կոչնակ»ի խմբագրութեան կողմէ՝ Տոքթ. Տ. Հ. Գասպազեան, «Հանդէս Ամսօրեայ»ի խմբագրութիւնն ալ Հաճած էր իր ներկայացուցիչին՝ Տիար Տ. Տիքիճեանի միջոցով յայտնել իր զգացումները:

Նիւ Եորքի Հայ Առաք. եկեղեցւոյ Հոգաբարձութեան, Հայկական Միութեան, Պարսկահայ Կրթասիրացին եւ Փորթուգալեանի Յորբելեանական Յանձնախումբին կողմէ իբր ներկայացուցիչ զրկուած էր Տիար Ե. Մարութեան որ ի դիմաց յիշեալ չորս Հաստատութեանց շնորհաւորական խօսքեր ըսաւ:

Պրն. Ատենապետը պատեհութիւն տուաւ ներկայ Հասարակութեան, որ կարճ խօսքերով իրենց բաղձանքները յայտնեն անոնք որ կը փափաքին: Տիար Կ. Գարակիւլեան, Գ. Կիրակոսեան եւ ուրիշներ ներբողալի խօսքեր ըրին Ուս. Միութեան այս ձեռնարկութեան Համար, եւ առաջարկեցին որ Հանգանակութիւն մը բացուի ներկաներուն մէջ, գոյացած արդիւնքով դրքոյկ մը հրատարակելու՝ ի յիշատակ Հայ Տպագրութեան այս չորսհարիւրամեակի Հանդէսին, որ միեւնոյն ատեն Ամերիկահայ գաղութին մէկ արժանի ձայնն ըլլայ: Ներկաները գոհունակութեամբ ընդունեցին այս առաջարկութիւնը: Հանգանակութեան արդիւնքն եղաւ 43 տուար 20 սէնթ:

Միութեանս Ընդհ. Քարտուղարը կարդաց շնորհաւորական նամակներն ու Հեռագիրները որ զրկուած էին Նիւ Եորքի Հայկական Միութեան Մարմինէն, Մ. Փորթուգալեանի գրական յորբելեանի յանձնախումբէն, Խարբերդի Միաց. Կրթ. Ընդ. Վարչութենէն, Վիէննայի Մխիթարեան Միաբանութենէն, Տիար Ա. Չօպանեանէ եւ զանազաններէ:

Իսկ Հեռագրեր զրկած էին Տոքթ. Յ. Տատուրեան, Տոքթ. Ն. Իզնայեան եւ «Կոչնակ» ի խմբագրութիւնը:

Հանդէսը վերջացաւ Հանդիսականներու գոհունակ տպաւորութեան տակ:

ՎԱՀԱՆ-ՄԵՍՐՈՊ

